

ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարցելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

**1 Ի՞նչն են կոչում նյութական կետի տեղափոխություն:**

- 1) կոռորդինատային առանցքների սկզբնակետը նյութական կետի վերջնական դիրքին միացնող վեկտորը
- 2) նյութական կետի անցած ճանապարհին թվային արժեքով հավասար վեկտորը
- 3) նյութական կետի սկզբնական դիրքը վերջնական դիրքին միացնող վեկտորը
- 4) նյութական կետի հետազծի երկարությունը

**2 X առանցքով շարժվող մարմնի տեղափոխության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումը ներկայացվում է  $s_x = 40t - 2t^2$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ինչպիսի՞ շարժում է կատարում մարմինը և ո՞ր ուղղությամբ:**

- 1) ուղղագիծ հավասարաչափ շարժում X առանցքի դրական ուղղությամբ
- 2) ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում X առանցքի դրական ուղղությամբ
- 3) մինչև 10 վ-ը X առանցքի դրական ուղղությամբ ուղղագիծ հավասարաչափ դանդաղող շարժում, որից հետո մնում է դադարի վիճակում
- 4) մինչև 10 վ-ը X առանցքի դրական ուղղությամբ ուղղագիծ հավասարաչափ դանդաղող շարժում, որից հետո՝ հակառակ ուղղությամբ, հավասարաչափ արագացող շարժում

**3 Ω՝ դեպքում է մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում կատարում ուղղագիծ հավասարաչափ շարժում:**

Եթե մարմնի վրա.

- 1) ազդող ուժերի համագորն ուղղահայաց է արագությանը:
- 2) ուժեր չեն ազդում կամ դրանց համագորը զրո է:
- 3) հաստատուն ուժ է ազդում:
- 4) մեկ ուժ է ազդում:


**4 Ω՝ բանաձևն է ձիցու արտահայտում Նյուտոնի երկրորդ օրենքը  $R$  շառավղով շրջանագծային հավասարաչափ շարժման դեպքում:**

- 1)  $F_h = m \frac{v^2}{R}$
- 2)  $F_h = m \frac{2\pi}{T} R$
- 3)  $F_h = m\omega R$
- 4)  $F_h = 2\pi n R m$

5

Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված Երկրի և Արեգակի փոխազդեցության ուժերը:

- 1) ս
- 2) թ
- 3) զ
- 4) դ



6

$M$  զանգվածով մոլորակի շուրջը պտտվում է  $m$  զանգվածով արբանյակը: Ո՞րն է մոլորակի վրա ազդող արբանյակի ուժի մասին ճիշտ պնդումը:


Ուժն ուղիղ համեմատական է.

- 1)  $\frac{M}{m}$ -ին:
- 2)  $M \cdot m$ -ին:
- 3)  $M$ -ին և կախված չէ  $m$ -ից:
- 4)  $m$ -ին և կախված չէ  $M$ -ից:

7

Ո՞ր ուժի բազուկն է ամենամեծը նկարում պատկերված ձողի  $O$  ծայրակետով անցնող և նկարի հարթությանն ուղղահայաց առանցքի նկատմամբ:

- 1)  $\vec{F}_1$
- 2)  $\vec{F}_2$
- 3)  $\vec{F}_3$
- 4) բոլոր ուժերի բազուկները հավասար են միմյանց



8

Ո՞րն է մեխանիկական էներգիայի չափման միավորը՝ արտահայտված ՍՀ-ի հիմնական միավորներով:

- 1)  $1 \text{ կգ}\cdot\text{մ}^{-2}$
- 2)  $1 \text{ կգ}\cdot\text{մ}^2\cdot\text{վ}^{-1}$
- 3)  $1 \text{ կգ}\cdot\text{մ}^{-3}$
- 4)  $1 \text{ կգ}\cdot\text{մ}^2\cdot\text{վ}^{-2}$

9


Օդապարիկը հաստատուն արագությամբ իջնում է ներքև: Պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) նրա պոտենցիալ էներգիան փոխակերպվում է օդի և օդապարիկի ներքին էներգիաների
- 2) նրա պոտենցիալ էներգիան փոխակերպվում է կինետիկ էներգիայի
- 3) նրա կինետիկ էներգիան փոխակերպվում է պոտենցիալ էներգիայի
- 4) էներգիայի փոխակերպում տեղի չի ունենում

10

Նկարում պատկերված անոթի  $A$ ,  $B$  և  $C$  կետերում հեղուկի ճնշումների միջև հարաբերակցություններից ո՞րն է ճիշտ :

- 1)  $p_A = P_B = p_C$
- 2)  $p_C > P_A > p_B$
- 3)  $p_A = P_B < p_C$
- 4)  $p_C < P_A < p_B$



11

Մարմինը լողում է հեղուկի մակերևույթին: Ո՞րն է մարմնի վրա ազդող ծանրության և արքիմետյան ուժերի մոդուլների միջև ճիշտ հարաբերակցությունը:

- 1)  $|m\vec{g}| = |\vec{F}_U|$
- 2)  $|m\vec{g}| > |\vec{F}_U|$
- 3)  $|m\vec{g}| < |\vec{F}_U|$
- 4)  $|m\vec{g}| + |\vec{F}_U| = 0$

12

Ինչպես կփոխվի զապանակին ամրացված բեռի տատանումների պարբերությունը, եթե նրա զանգվածը փոքրացնեն 4 անգամ:

- 1) կփոքրանա 4 անգամ
- 2) կփոքրանա 2 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կմեծանա 2 անգամ

13

Ո՞րն է ճիշտ շարունակությունը:


Գազի մեկ մոլը նյութի այն քանակն է, որը պարունակում է այնքան մոլեկուլ, որքան.

- 1) Ավոգադրոյի հաստատունն է:
- 2)  $1/12$  գ ածխածինը:
- 3) 12 կգ ածխածինը:
- 4)  $1/12$  կգ ածխածինը:

14

Նկարում պատկերված գրաֆիկում բերված ո՞ր պրոցեսի ընթացքում հաստատուն զանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը չի փոխվում:


- 1)  $oc$
- 2)  $ab$
- 3)  $de$
- 4) չկա ճիշտ պատասխան



15

Ինչպես է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը նկարում պատկերված  $1 \rightarrow 2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսի ընթացքում:

- 1) միշտ մեծանում է
- 2)  $1 \rightarrow 2$  պրոցեսում փոքրանում է, իսկ  $2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսում՝ մեծանում
- 3)  $1 \rightarrow 2$  պրոցեսում մեծանում է, իսկ  $2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսում՝ փոքրանում
- 4)  $1 \rightarrow 2$  պրոցեսում մեծանում է,  $2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսում հաստատուն է, իսկ  $3 \rightarrow 4$  պրոցեսում՝ փոքրանում



16

Ո՞ր դեպքում է մեծանում մարմնի ներքին էներգիան:

- 1) մարմնի արագությունը մեծացնում են 2 մ/վ-ով
- 2) մարմինը բարձրացնում են 2 մ-ով
- 3) մարմինը տաքացնում են 2 °C-ով
- 4) երեք դեպքերում էլ մեծանում է

17

$m$  զանգվածով մարմնին  $Q$  ջերմաքանակ հաղորդելիս նրա ջերմաստիճանը բարձրացավ  $\Delta T$ -ով:

Ո՞ր արտահայտությունն է որոշում մարմնի տեսակարար ջերմունակությունը:

- 1)  $\frac{Q}{m}$
- 2)  $\frac{Q}{\Delta T}$
- 3)  $\frac{Q}{m\Delta T}$
- 4)  $mQ\Delta T$

18

100 °C ջերմաստիճանում ջրի գոլորշին, խտանալով փոխակերպվում է նույն ջերմաստիճանի ջրի: Ինչպես սկզբան այդ դեպքում նրա զանգվածը, ծավալը, խտությունը և ներքին էներգիան:

- 1) ծավալը կփոքրանա, զանգվածը կմեծանա, խտությունն ու ներքին էներգիան չեն փոխվի
- 2) զանգվածը չի փոխվի, խտությունը կփոքրանա, ծավալն ու ներքին էներգիան կմեծանան
- 3) ծավալն ու ներքին էներգիան կփոքրանան, զանգվածը չի փոխվի, խտությունը կմեծանա
- 4) բոլոր մեծությունները ել կփոքրանան

**19**

Ո՞րն է ճիշտ շարունակությունը:  
Հազեցած գոլորշու ճնշումը կախված է.

- 1) գոլորշու կոնցենտրացիայից և ջերմաստիճանից:
- 2) գոլորշու կոնցենտրացիայից և ծավալից:
- 3) գոլորշու ծավալից և ջերմաստիճանից:
- 4) միայն ծավալից:

**20**

Ինչի՞ց է կախված համասեռ ձողի կոշտությունը:

- 1) միայն ձողի նյութի տեսակից
- 2) միայն ձողի երկարությունից
- 3) միայն ձողի երկարությունից և նյութի տեսակից
- 4) ձողի երկարությունից, լայնական հատույթի մակերեսից և նյութի տեսակից

**21**

Ինչպե՞ս է լիցքավորված մարմինը, եթե նրա մեջ կեկտրոնների թիվը գերազանցում է պրոտոնների թիվը:

- 1) դրական
- 2) բացասական
- 3) չեղոք է
- 4) կարող է լինել դրական կամ բացասական

**22**

Երկու անշարժ կետային լիցքերի կեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլը  $F$  է:  
Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնեն  $n$  անգամ:

- 1)  $\frac{F}{n^2}$
- 2)  $\frac{F}{n}$
- 3)  $n F$
- 4)  $n^2 F$

**23**

Ինչի՞ց է կախված հաղորդչի տեսակարար դիմադրությունը:

- 1) լարումից
- 2) հնաանքի ուժից
- 3) նյութի տեսակից և ջերմաստիճանից
- 4) հաղորդչի չափերից, նյութի տեսակից և ջերմաստիճանից

24


Ո՞ր մեծության արժեքն է նույնը հաջորդաբար միացված բոլոր հաղորդիչների համար:

- 1) լարման
- 2) հսանքի ուժի
- 3) դիմադրության
- 4) թվարկած բոլոր մեծությունների

25

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:


- 1)  $4R$
- 2)  $R$
- 3)  $\frac{3R}{2}$
- 4)  $\frac{5R}{3}$



26

Նկարում պատկերված  $R_1$  և  $R_2$  դիմադրություններով սպառիչներից որո՞ւմ և քանի՞ անգամ ավելի մեծ հզորություն է անջատվում, եթե հայտնի է, որ  $R_2 = 3R_1$ :

- 1)  $R_1$ -ում, 3 անգամ
- 2)  $R_1$ -ում, 9 անգամ
- 3)  $R_2$ -ում, 3 անգամ
- 4)  $R_2$ -ում, 9 անգամ



27

Ո՞ր քանածեով է արտահայտվում Ջոու-Լենցի օրենքը:

- 1)  $Q = I^2 R t$
- 2)  $Q = m\lambda$
- 3)  $Q = mr$
- 4)  $Q = mq$

28

Ինչպե՞ս է փոխվում կիսահարողի հաղորդականությունն այն լուսավորելիս:

- 1) մեծանում է
- 2) փոքրանում է
- 3) մնում է նույնը
- 4) կմեծանա կամ կփոքրանա

**29**

**Ո՞ր մեծությունն են անվանում Ֆարաղեջի հաստատուն:**

- 1) Էլեկտրոնի լիցքի և Բոլցմանի հաստատունի արտադրյալը
- 2) Էլեկտրոնի լիցքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը
- 3) Էլեկտրոնի լիցքի և Էլեկտրաքիմիական համարժեքի արտադրյալը
- 4) քիմիական համարժեքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը

**30**

**Ո՞ր միջավայրում է դրսուրվում հոսանքի մազնիսական ազդեցությունը:**

- 1) միայն վակուումում
- 2) միայն մետաղներում
- 3) կամայական միջավայրում
- 4) մետաղներում և էլեկտրոլիտներում

**31**


**→ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում տեղադրված է I երկարությամբ ուղղագիծ հաղորդակար, որով անցնող հոսանքի ուժը I է: Էլ ո՞ր մեծությունը պետք է հայտնի լինի հաղորդչի վրա մազնիսական դաշտի կողմից ազդող ուժը որոշելու համար:**

- 1) հաղորդչի զանգվածը
- 2) հաղորդչի դիմադրությունը
- 3) հաղորդչի լայնական հատույթի մակերեսը
- 4) → Վեկտորի և հաղորդչով անցնող հոսանքի ուղղության կազմած անկյունը

**32**

**Նկարում պատկերված պղնձե օղակի մոտ, նրա մակերևույթին ուղղահայաց տեղադրված է հաստատուն մազնիս: Առաջին դեպքում օղակը շարժում են դեպի ներքև, իսկ երկրորդ դեպքում՝ դեպի աջ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:**

- 1) միայն առաջին դեպքում
- 2) միայն երկրորդ դեպքում
- 3) երկու դեպքում ել
- 4) ոչ մի դեպքում



**33**

Ինչպե՞ս է փոխվում ծառի ստվերի երկարությունը՝ արևոտ օրվա ընթացքում:

- 1) նույնն է ամբողջ օրվա ընթացքում
- 2) ամենակարձն է, եթե Արեգակը հորիզոնից ամենաբարձր կետում է
- 3) ամենակարձն է, եթե Արեգակը ծագում է, և ամենաերկարն է, եթե մայր է մտնում
- 4) ամենաերկարն է, եթե Արեգակը ծագում է, և ամենակարձն է, եթե մայր է մտնում

**34**

Լույսի ճառագայթը ջրից ( $n_s = 1,33$ ) անցնում է ապակու ( $n_w = 1,6$ ) մեջ: Ինչպե՞ս է փոխվում այդ դեպքում լույսի արագությունը:

- 1) մեծանում է
- 2) փոքրանում է
- 3) մնում է անփոփոխ
- 4) պատասխանը կախված է անկման անկյունից

**35**

Ո՞րն է կոչվում ոսպնյակի կիզակետային հեռավորություն:

- 1) երկու կիզակետերի միջև հեռավորությունը
- 2) ոսպնյակի մակերևույթների միջև հեռավորությունը
- 3) կիզակետի և ոսպնյակի օպտիկական կենտրոնի միջև հեռավորությունը
- 4) ոսպնյակի մակերևույթների կորության կենտրոնների միջև հեռավորությունը

**36**

Մութ սենյակում ինչպե՞ս կարելի է շոշափելով որոշել երկու ոսպնյակներից ո՞րն է հավաքող, ո՞րը՝ ցրող:

- 1) հավաքող ոսպնյակն ուսուցիչի է, ցրողը՝ գոգավոր
- 2) հավաքող ոսպնյակը գոգավոր է, ցրողը՝ ուսուցիչ
- 3) երկու ոսպնյակներն ել ուսուցիչի են, սակայն հավաքողն ավելի հաստ է
- 4) երկու ոսպնյակներն ել գոգավոր են, սակայն հավաքողն ավելի հաստ է

**37**

Ո՞ր պնդումն է ձիշու:

Լույսի արագությունը.

- 1) կախված չէ միջավայրից:
- 2) կախված է աղբյուրի արագությունից:
- 3) վակուումում կախված չէ աղբյուրի արագությունից:
- 4) վակուումում կախված է հաշվարկման համակարգից:

**38**

Ապակե թիթեղով անցնելիս լույսի փնջի ուժգնությունը փոքրանում է: Ի՞նչ է տեղի ունենում այդ դեպքում:

- 1) Փոտոնների թիվը փոքրանում է
- 2) Լույսի հաճախությունը փոքրանում է
- 3) Փոտոն յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է
- 4) Ֆոտոնների թիվը և յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է

**39**

Ո՞րն է ձիշտ շարունակությունը:

Ասոմմը ձառագայթում է.

- 1) զրգոված վիճակից հիմնական վիճակի անցնելիս:
- 2) հիմնական վիճակից զրգոված վիճակի անցնելիս:
- 3) ուղեծրով էլեկտրոնի արագացող շարժման ժամանակ:
- 4) ուղեծրով էլեկտրոնի հավասարաչափ շարժման ժամանակ:

**40**

Ի՞նչ մասնիկ է առաջանում  $^{14}_7N + ^4_2He \rightarrow ^{17}_8O + ?$  միջուկային ռեակցիայի հետևանքով:


- 1) պրոտոն
- 2) նեյտրոն
- 3) էլեկտրոն
- 4) ալֆա մասնիկ

**41**

Ճանապարհի հորիզոնական տեղամասում դադարի վիճակից շարժումն սկսելուց 10 վ-ի ընթացքում ավտոմեքենայի վրա ազդում է 3000 Ն համազոր ուժ, որի հետևանքով այն ձեռք է բերում 15 մ/վ արագություն: Որքա՞ն է ավտոմեքենայի զանգվածը:

**42**

Նկարում պատկերված է իդեալական գազի վիճակի փոփոխությունը:  
Այդ պրոցեսում գազը միջավայրին է տալիս  $50 \text{ k}\ddot{\text{o}}$  ջերմաքանակ:  
Որքան է արտաքին ուժերի կատարած աշխատանքը: Պատասխանը  
բազմապատկել  $10^{-4}$ -ով:



**43**

Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 4 մ է: Որքան է առարկայի հեռավորությունը ոսպնյակից, եթե այն 4 անգամ փոքր է, քան իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից:

**44**

Ի՞նչ առավելագույն կինետիկ էներգիա են ունենում լիթիումից պոկված էլեկտրոնները՝  $10^{15}$  Հց հաճախությամբ լույսով ճառագայթելիս: Լիթիումի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը  $3,84 \cdot 10^{-19} \text{ }\Omega$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով: Պլանկի հաստատունն ընդունել  $6,6 \cdot 10^{-34} \text{ }\Omega\cdot\text{v}$ :

(45-46). Դադարի վիճակից մարմինը ցած է սահում 2 մ երկարություն և 0,8 մ բարձրություն ունեցող թեք հարթության գագաթից: Շփումն անտեսել: Ազատ անկման արագացման արժեքն ընդունել  $10 \text{ m/s}^2$ :

**45**

Որքա՞ն է մարմնի արագացումը:

**46**

Որքա՞ն ժամանակում մարմինը կհասնի թեք հարթության հիմքին:

(47-48).  $1000 \Omega/\text{k}\Omega$  տեսակարար ջերմունակություն ունեցող  $0,5 \text{ kg}$  զանգվածով զազը  $10 \text{ N}$ -ով տաքացնելիս նրա ներքին էներգիան աճեց  $1000 \Omega$ -ով:

**47**

Որքա՞ն ջերմաքանակ է հաղորդվել զազին:

**48**

Որքա՞ն է զազի կատարած աշխատանքը:

(49-50). Տատանողական կոնսուրի կոնդենսատորի լարումը ժամանակից կախված փոխվում է  $U = 50 \cos(10^4 \pi t)$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Կոնդենսատորի ունակությունը  $2 \cdot 10^{-7}$  ֆ է:

**49**

Որքա՞ն է տատանողական կոնսուրի հաճախությունը:

**50**

Որքա՞ն է կոնսուրի կոճի ինդուկտիվությունը: Ընդունել  $\pi^2 = 10$ : Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

(51-52). Դիֆրակտային ցանցի միջոցով, նրան ուղղահայաց ընկնող ալիքի 625 նմ երկարությամբ մեներանգ լրույփի փնջով լրացնութելիս, կարելի է ստանալ առավելագույնն ուժերորդ կարգի մաքսիմում:

**51** Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:

**52** Քանի՞ նրբագիծ է պարունակում ցանցը 1 մմ-ի վրա:

(53-54). Զրածնի ատոմում էլեկտրոնի պտտման շառավիղը փոքրացավ 16 անգամ, եթե այն մի ուղեծրից մյուսն էր անցնում:

**53** Քանի՞ անգամ մեծացավ էլեկտրոնի վրա ազդող կուլոնյան ձգողության ուժը:

**54**

Քանի<sup>՞</sup> անգամ մեծացավ էլեկտրոնի շարժման արագությունը:

**55**

Որքա<sup>՞ն</sup> է մարմնի վրա ազդող հարթության հակագնեցության ուժը:

**56**

Որքա<sup>՞ն</sup> է մարմնի և հարթության միջև շփման գործակիցը: Պատասխանը բազմապատկել 10-ով:


**57**

Որքա՞ն կլինի մարմնի վրա ազդող հարթության հակազդեցության ուժը, եթե նրա վրա կիրառված նույն մեծությամբ ուժը հորիզոնի հետ կազմի  $30^\circ$  անկյուն:

**(58-60).** Միասում իդեալական գազի վիճակի փոփոխությունը պատկերված է  $p - V$  դիագրամի վրա (նկ.), որտեղ  $p_0 = 0,1 \text{ UPa}$ ,  $V_0 = 2 \text{ l}$ :  
Գազային ունիվերսալ հաստատունի արժեքն ընդունել  $8,3 \Omega/\text{մոլ}\cdot\text{Կ}$ :

**58**

Ի՞նչ աշխատանք է կատարել գազն այդ պրոցեսի ընթացքում:



**59**

Որքա՞ն է գազի ներքին էներգիայի փոփոխությունը:

**60**

Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:

(61-64). Լիցքավորված գնդիկը կախված է 45 սմ երկարությամբ թելից և տեղադրված է հորիզոնական ուղղված 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում։ Մազնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց հարթության մեջ, թելը բերի հետ միասին շեղում են մինչև հորիզոնական դիրք և բաց թողնում։ Հակադիր ուղղություններով գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելիս թելի լարման ուժերի տարբերությունը  $3 \cdot 10^{-4}$  Ն է։ Օդի դիմադրությունն անտեսել։ Ազատ անկման արագացման արժեքն ընդունել  $10 \text{ m/s}^2$ :

**61**

Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելիս:

**62**

Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելիս:

**63**

Որքա՞ն է գնդիկի վրա ազդող Լորենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելիս:  
Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:

**64**

Որքա՞ն է գնդիկի լիցքը: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:

(65-68). Լուսի կետային աղբյուրի և Էկրանի հեռավորությունը 50 սմ է: Նրանց միջև տեղադրված հավաքող բարակ ոսպնյակը տալիս է աղբյուրի հստակ պատկերը՝ ոսպնյակի երկու դիրքերում, որոնք իրարից հեռացված են 10 սմ-ով:

**65**

Որքա՞ն է ոսպնյակի և աղբյուրի նվազագույն հեռավորությունը, որի դեպքում ստացվում է աղբյուրի հստակ պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

**66**

Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումն այդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

**67**

Որքա՞ն է ոսպնյակի և էկրանի առավելագույն հեռավորությունը, որի դեպքում ստացվում է աղբյուրի հստակ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

**68**

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

69

Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

- 1) Տատանողական կոնտուրում կոնդենսատորի լիցքաթափման սկզբից  $t = \frac{T}{4}$  ժամանակ անց կոնտուրի լրիվ էներգիան կենտրոնացված կլինի կռնում:
- 2) Տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների ընթացքում մագնիսական դաշտի էներգիան փոխվում է ու հաճախությամբ: Դա նշանակում է, որ տատանողական կոնտուրում լիցքի տատանումների հաճախությունը  $2\nu$  է:
- 3) Լիցքավորված մասնիկի ցանկացած շարժման ընթացքում այն ձառագայթում է էլեկտրամագնիսական ալիք:
- 4) Էլեկտրամագնիսական ալիքում  $\vec{E}$  լարվածության վեկտորն ուղղահայաց է ալիքի տարածման ուղղությանը, իսկ  $\vec{B}$  մագնիսական ինդուկցիայի վեկտորն ունի տարածման ուղղությունը:
- 5) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքի տարածման արագությունը կախված է հաճախությունից:
- 6) Վակուումից որևէ միջավայր անցնելիս էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը փոխվում է:

70

Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

- 1) Զերմային ձառագայթումն էլեկտրամագնիսական ձառագայթում է:
- 2) Քվանտները մասնիկներ են, որոնք ոչ միայն ձառագայթվում են, այլև տարածվում են և կլանվում են՝ պահպանելով իրենց անհատականությունը:
- 3) Ֆոտոնի իմպուլսը կարելի է հաշվել  $p = h\lambda$  բանաձևով, որտեղ  $h$ -ը Պլանկի հաստատունն է,  $\lambda$ -ն՝ լույսի ալիքի երկարությունը:
- 4) Լույսի ազդեցությամբ մետաղից պոկված մասնիկների լիցքը դրական է:
- 5) Ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան կախված է լույսի ուժգնությունից:
- 6) Եթի աշխատանքն այն նվազագույն աշխատանքն է, որ պահանջվում է էլեկտրոնը մետաղից պոկելու համար: